



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թ Ի Վ 4

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2019 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Դեկանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի նիստի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 35-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի այս նիստին մասնակցում է ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ակադեմիկոս Գ. Գևորգյանը:

Այնուհետև նիստը վարելու համար առաջադրվեց պրոֆ. Վ. Գաբրիելյանի թեկնածությունը, և նա միաձայն ընտրությամբ ստանձնեց նախագահի պարտականությունները:

Սահմանվեց ելույթների ժամանակացույց՝ դեկանի հաշվետվության համար՝ 30 րոպե, իսկ անդամների՝ 3-5 րոպե:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր տարեկան հաշվետվության մեջ մասնավորապես զեկուցեց հետևյալը.

- Հաշվետու տարում ֆակուլտետի առկա ուսուցմամբ սովորում է 426 ուսանող՝ 367-ը բակալավրիատում, 59-ը մագիստրատուրայում: Հեռակա ուսուցմամբ՝ 68 ուսանող՝ 55-ը բակալավրիատում, 13-ը մագիստրատուրայում: Ֆակուլտետի աշխատակիցների պատկերը հետևյալն է. 74 աշխատակից, որից 13 դոկտոր, 46 դոցենտ, 15 դասախոս, ասպիրանտների թիվը 12 է, հայցորդներինը՝ 9: Ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալների կազմակերպչական աշխատանքները ըստ սոցիալաբանության կազմում է. բակալավրիատում՝ 4.36, մագիստրատուրայում՝ 4.56, դեկանատի գործավարների գնահատականը 4.7 է:

Հաշվետու շրջանում ֆակուլտետի գիտխորհրդի 10 նիստ է տեղի ունեցել, որտեղ քննարկվել են կրթական, ուսումնական, գիտական, կազմակերպչական, աշխատանքային, կարգապահական, կանոնակարգային, ծրագրային, մեթոդական բազմաբնույթ հարցեր:

Ֆակուլտետում գործող 012 «Գրականագիտություն» աստիճանաշնորհող խորհրդում մեկ տարվա ընթացքում ոչ մի թեկնածուական կամ դոկտորական աշխատանք չի պաշտպանվել, մինչդեռ նախորդ տարիներին 5-6 աշխատանքների էին պաշտպանվում: Սա ևս մի վկայություն է այն բանի, որ մարդիկ չեն ուզում գիտության աստիճանի ոլորտ մտնել (մյուս վկայությունն այն է, որ արդեն տարիներ շարունակ թափուր են մնում ասպիրանտների և հայցորդների համար հատկացված տեղերը): Մինչդեռ որոշ շրջանակներում դեռ շարունակում են կարծել, թե դասախոս դառնալու համար մարդիկ ուշաթափ են լինում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը իրականացրել է իր հիմնական գործառույթը՝ դասատվությունը՝ միշտ գիտակցելով, որ դասերը պետք է հազեցված լինեն գիտականությամբ, նոր մոտեցումներով ու մեկնություններով, մեթոդական հիմնավորվածությամբ, որակական բարձր չափանիշներով: Վերոհիշյալ գործունեությանը զուգահեռ,

Ֆակուլտետը իրականացրել է գիտության, կրթության և ուսումնական աշխատանքներին վերաբերող լայն գործունեություն: Թվարկենք դրանցից միայն մի մասը.

1. Ֆակուլտետի ամբիոնները և դեկանատը մասնակցել է ուսումնական տարաբնույթ ծրագրերի, կանոնակարգերի, նախագծերի ստեղծման աշխատանքներին, որոնք իրականացվել են ռեկտորատի կողմից, պատասխանել հարյուրավոր գրությունների, իր գրավոր ու բանավոր կարծիքը հայտնել համալսարանական ու բուհական կյանքին վերաբերող քննարկումներում, մասնակցել համալսարանական կառույցների աշխատանքներին, համալսարանում կազմակերպված մի շարք դասախոսությունների ու սեմինարների:
2. Ֆակուլտետը ակտիվորեն մասնակցել է համալսարանի 100-ամյակին նվիրված նախապատրաստական բոլոր աշխատանքներին, ինչպես և տոնակատարության բոլոր միջոցառումներին, այդ թվում և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կենսագրական հատորյակի կազմման աշխատանքներին: Ֆակուլտետի մի շարք դասախոսներ պարգևատրվել են համալսարանական մեդալներով և պատվոգրերով, իսկ պրոֆ. Վ. Սաֆարյանը ստացել է «Մովսես Խորենացի» մեդալ:
3. Հաշվետու շրջանում ֆակուլտետի գործունեությունը ուղղված է եղել նաև մասնագիտական կողմնորոշման նպատակով Երևան քաղաքում և մարզերում անցկացվող ակնարկային դասախոսությունների իրականացմանը: Դպրոցներ են հաճախել մի քանի տասնյակ դասախոսներ, դրանցից մի մասը նաև հեռավոր և սահմանամերձ շրջաններ: Հատկապես ակտիվ գործունեություն են ծավալել Ս. Մուրադյանը, Ս. Ղազարյանը, Ա. Արզումանյանը, Ս. Սրապիոնյանը, Ն. Դիլբարյանը, Ա. Աբաջյանը, Փ. Մեյթիխանյանը, Լ. Թեյլանը, Մ. Ֆելեքյանը: Բուհ-դպրոց-ֆակուլտետ կապի արտահայտություններից մեկն էլ այն է, որ մեր մի շարք դասախոսներ մասնագիտական դասժամեր ունեն Երևան քաղաքի տարբեր դպրոցներում: Չեմ կարող չասել, որ մեր դասախոսները խիստ ծանրաբեռնված են, նրանց մի մասը աշխատում է 0.5, 0.75 դրույքով և, բնականաբար, այնքան էլ գոհությամբ չեն մեկնում շրջաններ: Լուծումներից մեկը կարող է լինել հեռավար դասախոսությունը և կամ՝ գովազդային ժապավենների պատրաստումը:

Ֆակուլտետի գիտխորհրդում քննարկվել և ՀՀ ԲՈԿ է ուղարկվել «Բաց նամակ»՝ որտեղ մերժվել է ԵՊՀ հումանիտար ուղղվածությամբ «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտության հարցեր», «Բանբեր հայագիտության», ինչպես նաև հանրապետական «Բանբեր Մատենադարանի», «Էջմիածին», «Լեզու և լեզվաբանություն», «Լրաբեր» հանդեսներն ու ամսագրերը ԲՈԿի՝ «վերապահությամբ» ընդունելի հրապարակումների ցուցակում ընդգրկելը: Մի որոշում, որ շատ որոշակի ժխտողական ուղղվածություն ունի առ հայագիտությունը: Եթե այսպես շարունակվի, ու՞ր ենք հասնելու: Ի դեպ, վերջերս ստացել ենք պրոռեկտոր Իսրայելյանին ուղղված «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի դիմումը, որը ուղղված է համալսարանի բոլոր ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողներին, որտեղ սևով սպիտակի վրա գրված է, որ այդ դասախոսությունները կարդացողը պետք է (մեջբերում) «վարժ տիրապետի հայերենին և ունենա գրավոր ու բանավոր հաղորդակցության գերազանց հմտություններ» (մեջբերման վերջ): Ուզում ես հարցնել. որտե՞ղ և ինչպե՞ս պետք է շրջանավատը այդ հմտություններին տիրապետի՝ դպրոցում ուսանելի՞ս: Բայց ո՞ւմ հարցնես: Հաշվետու շրջանում ֆակուլտետի գիտխորհուրդը և առաջատար դասախոսները կարծիքներ, եզրակացություններ, երաշխավորություններ են տվել հանրապետության տարբեր շրջաններից ու ուսումնական կառույցներից մեզ ուղարկված գրքերի, դասագրքերի, ուսումնասիրությունների, ծրագրերի, թեզերի ու հոդվածների վերաբերյալ: Կապերը հատկապես սերտ են եղել Արցախի համալսարանի և Իջևանի մեր մասնաճյուղի միջև, որոնցից թվարկենք մեկերկուսը՝ «Գիտական Արցախ» պարբերականի հետ մշտական համագործակցությունը և Իջևանի համալսարանի համար «Հայոց լեզու և գրականություն կրթական ծրագրերի քննարկումներ», Իջևանում մեր դասախոսների նախաձեռնությամբ և մասնակցությամբ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի կազմակերպում:

Ֆակուլտետի արտահամալսարանական գործունեությունը շատ լայն է: Բավական է թռուցիկ հայացք նետել այն հրավիրատոմսերին, որոնք ստացվել են գիտական ու կրթական այլևայլ կազմակերպություններից՝ ՀՀ գիտությունների ակադեմիայից, Համագ-գային հայ կրթական և մշակութային միությունից, Մատենադարանից, Գրողների

միությունից, դպրոցներից, թանգարաններից, մշակութային, լեզվաբանական ու գրականագիտական օջախներից: Հայ բարեգործական միության հետ ֆակուլտետում կազմակերպվել է «Մուշեղ Իշխանին» նվիրված միջազգային գիտաժողով: Ֆակուլտետ են այցելել Երևան քաղաքի հումանիտար թեքումով 8 դպրոցների թվով 150 աշակերտներ և ուսուցիչներ, ծանոթացել ֆակուլտետի կյանքին, դասախոսություններ լսել: «Ժամանակակից գրականության հարցեր» թեմայով հանդիպում է կայացել ՀՀ գրողների միության անդամ երիտասարդ գրողների հետ: ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի հետ եռօրյա գիտական նստաշրջան է կայացել Հովհ. Թումանյանի 150-ամյակի կապակցությամբ:

Հունիսին անց է կացվել դպրոցականների հանրապետական օլիմպիադա: Բացվել են Ջապել Եսայանի և Ալբերտ Շարուրյանի անվան լսարաններ: Ֆակուլտետի մի շարք դասախոսներ ելույթներ են ունեցել Խ. Աբովյանի, Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի տուն-թանգարանում: Ֆակուլտետում կայացել է Հ. Կարապենցի մրցանակի հանձնում: Մեծ է եղել մասնակցությունը «Մայրենիի օրվա» հետ կապված միջոցառումներում: Դպրոցներին ու մանկատներին գրքեր են նվիրվել: Մեծացել է նաև ֆակուլտետում գործող «Վերնատուն» ընթերցասրահի գրքերի քանակը:

Ֆակուլտետում կազմակերպվել է ավանդական տրնդեզը: Ֆակուլտետ են այցելել սփյուռքահայ մտավորականներ և գրողներ՝ Հ. Նալպանտյանը, Ե. Ազատյանը, որոնք հանդիպել են ուսանողների հետ, կարդացել դասախոսություն, կատարվել է գրքի շնորհանդես: Ֆակուլտետը մասնակցել է Գանձասարում հրավիրված գիտական նստաշրջանի աշխատանքներին:

Դեկտեմբերին դրամահավաք է եղել մեր դասախոսներից մեկին օգնելու նպատակով: Ֆակուլտետի առաջատար դասախոսների լուսանկարների շարքը համալրվել է պրոֆ. Հենրիկ Հարությունյանի նկարով: Տեղադրվել է Հովհաննես Բարսեղյանի կիսանդրին: Արտերկրից մի քանի հայցորդներ ու մագիստրոսներ են ժամանել՝ հայոց լեզու և գրաբար անհատական ծրագրով ուսանելու համար: Ֆակուլտետի կազմի մի մասը սահմանված կարգով վերապատրաստվել է որակավորման դասընթացներում:

Ֆակուլտետում կազմակերպվել են ասպիրանտուրայի ընդունելության և որակավորման մինիմում քննություններ: Ֆակուլտետի երկու դասախոսներ լրավճարային

պարզաստրումներ են ստացել սոցիալոգների արդյունքներով: Ծրագրված էր նույնպե-
րին ֆակուլտետում անցկացնել Եր. Օտյանի և Լ. Շանթի 150-ամյակների կապակցությամբ
հանրապետական գիտական նստաշրջան: Սակայն հայտնի դեպքերը ստիպեցին այն տե-
ղափոխել դեկտեմբեր ամիս:

Ֆակուլտետի մի քանի դասախոսներ գիտական գործուղումներ են ունեցել
արտերկիր, այդ մասին ավելի մանրամասն կխոսենք ամբիոնների աշխատանքներին
անդրադառնալիս: Ֆակուլտետի այս տարվա նորություններից պետք է համարել
«Բանասիրական ընթերցումներ» սեմինար-քննարկումների գործունեությունը, որտեղ
դասախոսները և ուսանողները անդրադարձ են կատարում հայագիտական ու բանա-
սիրական տարաբնույթ խնդիրների, ուսումնասիրություններ կատարում, ելույթներ ունե-
նում:

Այժմ անդրադառնանք ամբիոնային աշխատանքներին: Հասկանալի է, որ այն, ինչ
ասվեց վերևում, այդ ամենը իրականացվել է ամբիոնների ջանքերով ու աջակցությամբ:
Այդուամենայնիվ շեշտելի են նաև ամբիոնային որոշ աշխատանքներ: Մի քանի խոսք նաև
առկա թերությունների մասին.

1. Գնալով նվազում է ոչ միայն մագիստրատուրայում սովորել ցանկացողների
թիվը, այլև ասպիրանտուրայում սովորելու ցանկություն ունեցողներինը:
Պատճառները տարբեր են՝ սոցիալական խնդիրներ, ժամերի կրճատում,
աշխատանքի ցածր վարձատրություն...
2. Ուսանողների բացակայություննրը չեն նվազում, մանավանդ առաջին
ժամերից, որի պատճառը տրանսպորտն է և խցանումները:
3. Դասախոսների մի մասի գիտական գործունեությունը շարունակում է
ցանկալիից ցածր մնալ:
4. Ֆակուլտետի տեխնիկական միջոցները հին են:
5. Կարծում ենք ժամանակն է, որ ֆակուլտետում ստեղծվի հայոց լեզվի և գրաբարի
ուսուցման ժամանակակից լսարան իր համապատասխան տեխնիկական
միջոցներով:

6. Ուսանողները հաճախակի են ցանկանում երկրագիտական-ճանաչողական միջոցառումներ կազմակերպել, սակայն համալսարանի ունեցած միակ ավտոբուսը հնարավորություն չի տալիս նման միջոցառում իրականացնել:

Այդ իսկ պատճառով այս տարի մենք չկարողացանք Բանահյուսական նյութերի հավաքում կազմակերպել որևէ մարզում:

Ծավալուն աշխատանքներ են կատարվել ֆակուլտետի վեց ամբիոններում:

Հայոց լեզվի ամբիոնը հրատարակել է վեց մենագրություն, ուսումնասօժանդակ երկու ձեռնարկ, վերահրատարակել բուհական ձեռնարկ հումանիտար և բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար, տպագրության հանձնել ուսումնական ձեռնարկ, տպագրել ավելի քան երեսուն գիտական հոդվածներ: Ամբիոնի մի քանի դասախոսներ կատարում են գիտության պետական կոմիտեի թեմատիկ ու պայմանագրային աշխատանք: Ամբիոնում իրականացվում են ասպիրանտական թեզերի պատրաստման և հայագիտական աշխատանքներ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնը կազմակերպել է գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ: Ամբիոնի անդամները մասնակցել են աշակերտական օլիմպիադայի կազմակերպմանը, ղեկավարել ուսանողական գիտական աշխատանքներ, «Մայրենիի օրվա» կապակցությամբ հանդես եկել դպրոցներում, հանրապետության տարբեր հանդեսներում տպագրել քսան գիտական հոդվածներ: Ընթացքի մեջ են «Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա» գրքի աշխատանքները, ամբիոնի մի քանի դասախոսներ ընդգրկված են Գիտության պետական կոմիտեի թեմատիկ ու պայմանագրային աշխատանքներում:

Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոսները տպագրել են յոթ գիտական հոդված, տարբեր ֆակուլտետներում դասավանդել լեզվաբանության տեսություն, տիպաբանություն, նշանագիտություն և այլ առարկաներ, ղեկավարել ասպիրանտների և հայցորդների աշխատանքներ:

Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնը ակտիվ մասնակցություն է ունեցել Հովհ. Թումանյանի, Լ. Շանթի, Եր. Օտյանի, Կոմիտասի հոբելյանական գիտական նստաշրջաններին, հրատարակել մենագրություններ, պատրաստում է «Հայ

գրականության պատմություն» բուհական դասագիրքը, տպագրել է հոդվածների ժողովածուներ, միջազգային և հանրապետական գիտաժողովներում զեկուցումներով հանդես եկել, մամուլում տպագրել գիտական հոդվածներ, կրթական օջախներում հանդես եկել զեկուցումներով, ղեկավարել ասպիրանտական աշխատանքներ:

Հայ նորագույն գրականության ամբիոնի անդամները հաշվետու շրջանում տպագրել են մենագրություն և ձեռնարկ, մասնակցել միջազգային գիտաժողովների, հանդես եկել արտասահմանյան գիտաժողովներում, տպագրության պատրաստել ուսունամեթոդական ձեռնարկ:

Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի անդամները տպագրել են տասնհինգ գիտական հոդված, հանդես եկել գիտաժողովներում, հանդես են եկել Մոսկվայում կազմակերպված գիտաժողովներում: Ամբիոնի անդամներ մասնակցում են «Թումանյանական հանրագիտարանի» պատրաստման աշխատանքներին, տպագրել են գիտական հոդվածների ժողովածու, ակտիվորեն մասնակցել համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումներին:

Մնացած կատարված աշխատանքների և թերացումների մասին, կարծում եմ ելույթ ունեցողները կասեն:

Բաց քվեարկությամբ ղեկանի՝ 2018-2019 ուստարվա աշխատանքը գնահատվեց բավարար:

Այնուհետև տեղի ունեցան աշխույժ քննարկումներ: Ելույթ ունեցողները հայտնեցին իրենց գոհունակությունը ղեկանի աշխատանքներից՝ մասնավորապես շեշտելով, որ հիմնականում նրա շնորհիվ է, որ ֆակուլտետում արդեն բազմաթիվ տարիներ տիրում է բարոյահոգեբանական առողջ և գիտամանկավարժական կյանքի բարենպաստ մթնոլորտ: Զանց չառնվեցին նաև առանձին թերացումները, որոնց շտկումները հանձնարարվեցին ղեկանատին ու ամբիոններին:

Նիստի վերջում հանդես եկավ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը: Նա ևս իր գոհունակությունը հայտնեց ղեկանի կատարած աշխատանքից, բայց և այնպես շեշտադրեց, որ ֆակուլտետը պետք է պատրաստ լինի

գիտամանկավարժական մտքի նոր մարտահրավերներին, ջանա գրավելու նոր բարձունքներ, որոնք համահունչ կլինեն 21-րդ դարին:

ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ակադեմիկոս Գ. Գևորգյանը սիրով պատասխանեց նաև գիտական խորհրդի մասնակիցների տարաբնույթ հարցերին:

Գիտլխորհրդի նախագահող պրոֆ. Վ. Գաբրիելյանը վերջում շնորհակալություն հայտնեց բոլորին և նիստը համարեց փակված:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ